

ՇիՊԳԵՐ, դր ի., պրօֆեսօր անգլիական դրականութեան Վիեննայի
Համալսարանում՝ ՇեքՍՊԻՐ—ԲԱԿՈՆԵԱՆ ԽՆԴԻՐԸ:

Հայ հասարակութեան անլաւտ չը պիտի լինի այն կասկածը, որ սկսում են տարածել Շեքսպիրի գրածքների իսկական հեղինակի անձնաւորութեան վերաբէ կասկածը, որպէս լավանի է, նորանում է, իբր թէ Շեքսպիրը ոչ միան հեղինակը չէ իւր անունով լավանի հանճարեղ ողբերգութիւնների և դրամաների (Համլէտ, Օտելլօ, Թագաւոր Լիլ և ալլն), առ նա իբր թէ սկ ի այն մարդն էլ չի եղել, որ կարողանար ազդ տեսակ գրածքների հեղինակը լինել. Ալդպիսիսի կասկածները լարուցւած են զանազան ժամանակներում, բայց ոչ ոք այնքան մեծ ազմուկ չ'առաջացրեց, որքան ամերիկացի Դօննելլի (Donnelly), որը, իւր մի քանի տարի առաջ հրատարակած գրքով, ուղեց ապացուցանել, որ Շեքսպիրի անունով լավտնի գրածքների խակական հեղինակն է լավտնի ֆիլոսօֆակ և Շեքսպիրի ժամանակակից Բակօն Վերուլամցին, որը ասպրում էր 16-րդ դարում և 17-րդի սկզբներում. Դօննելլի, ի միջի այլ հանգամանքների, վշատակում էր նաև այն, որ, հին հեղինակների սովորութեան համաձայն, Շեքսպիրն ևս իւր անունով լավտնի գրածքների զանազան տեղերում խօսեր. ունի գրած, որոնց միասին դասաւորելով գուանում է մօտաւորապէս մի ալսպիսի նախադասութիւն, իբր թէ առ Շեքսպիրս, լավտնում եմ, որ իմ անունով գըր-

ւածքները պատկանում են Բակօն Վերուլամցուն, Բալլց, որ գլխաւորն է, Դօննելլիի ասելով, Շեքսպիրը չուներ ան բարձր մտասր կրթութիւնը, որ նրան թով տար ալնքան խորիմաստ դրամաներ գրելու, դրամաներ, որոնք ենթադրում են խորին տեղեկութիւններ ազգերի պատմութեան, աշխարհագրութեան, բարձր շրջանների կենցաղավարութեան, ֆիլոսօֆալութեան մասին և ալլն. Դօննելլլիի ասելով, ալբափիսի գործեր գրելու միան Բակօնն էր ընդունակ:

Ակդ խնդրի առիթով Շեքսպիրի և Բակօնի մասին վերջին տարիներում լուս տեսան բազմաթիւ գըրւածքներ, Ընդհանրապէս պէտք է ասած, որ Ընդհանուր կարծիքը լոգուս Շեքսպիրի չի խախտել, բայց և այնպէս, Դօննելլիի պնդումները լուրջ ուշադրութեան արժանացան. բայց ազդ մասին գրողները մեծ մասամբ Դօննելլիի հակառակորդներն են. Նորերում չ է ուսւէրը մի լուածով Բակօնի մասին եկաւ այն եղակացութեան, որ Բակօնի գրւածքների ոգին ալնաէս է, որ շատ անհաւանական է, որ նա մեծ բանաստեղծ եղած լինէր. Ակժմ դր Շիպկերն է, որը Շեքսպիր-Բակօնեան լինդիրը քննական հետազոտութեան է ենթարկում. Նա ի նկատի է առնում ազդ խնդրի առիթով լուս տեսած բազմաթիւ գրածքներ, առաջ է ըերում ժամանակակից մարդկանց

խօսքերի մի շարք իրանց անձնապէս կօնի համար կարելի է ասել թէ ծանօթ Նիլիամ Շեքսպիրի մասին և գարեն ջրագործութիւնով է պարապել, զայիս է այս և զրագացութեան, թէ Շեքսպիր դերասանը նուն դրամակական բանաստեղծն է, Դօննելլ'ի խօսքին, թէ Շեքսպիրը եղած է գարեն ջրագործ, որովհետեւ նա մասս է ծախել, Շիվալպերը պատասխանում է. «Մի պատւական գրքի մէջ Ս. Ստոպէս (C. Stopes) Լոնդոնում ապացուցեց, որ շատ աւելի շուտով Բա-

գոնի համար կարելի է ասել թէ գարեն ջրագործութիւնով է պարապել, քան Շեքսպիրի համար, որովհետեւ Բակօնը իւր գրւածների մի քանի տեղերում ընդարձակօրէն և գործը հասկացողի նման խօսում է գարեն ջրուր շինելու մասին, մինչդեռ Շեքսպիրը մատնում է իւր ծանօթութիւնը գարեն ջրի հետ միմիան նրանով, որ խօսում է գարեն ջրի և նորա ազգեցուցեան մասին»:

Ա. Ա.

ՍԻՄԷՅՆ ՀԱԽՈՒՄԵԱՆ. — «ՄԱՆԻԿ», (Ժամանակակից վէպ): Նուշի, տպարան Հայոց Հոգևոր Տեսչութեան, 1889 թ., մեծ քառածալ, 76 երես, տառ № 12: Գին է՝ 40 կոպէկ:

Նրեակափեցէք Ձեղ, ընթերցո՞ղ, պատերազմի ժամանակ՝ արհեստական կերպով նոր կազմակերպւած մի քաղաքում, ուր խմբած են բացի զինուրական և սովորական անձերից ակնալիներ, որոնց նպատակն է գնալ իւղու պատառներ, գիշատել, միանգամից հարստանալ. Պ. Հախումեանի գիրքը սկսում է այլ տեսակ գիշատիչների, չաղացած սարդերի մի զգելի խնճուքի նկարագրութիւնով. Դոքա անամօթ են, աներես. դոքա անպատկառ կերպով և անվախ ոռնակոխ են անում ամեն սրբութիւն. դոքա հաւատացած են, որ փողն է միակ չարգելի ոչքը աշխարհում, որ նա է մարդու գնահատելու չափը, որ նորանով կարելի է գնել ամեն բան, Նրկրորդ գլուխը նկարագրում է միենուն քաղաքում մի չարգելի բժշկի առն, ուր ժողովւած են զանազան տեղական աղաներ՝ հաշլու տալու գաղթականների համար հաւաքած մթերքների գործադրութեան մասին. Ազտեղ լուսաբանում է մեր հասարակական գործերի մէջ բանախ տեղի ունեցող այն երեսութը, որ հասարակական գումարները ուտում, անհետանում են, թագցում են կամ ծախսում են ըստ գործավարների ճաշկի:

Նրբորդ գլուխը՝ Թիֆլիսի փողոցավին անհոգ կեանքի, մեր անպահով հաւ ուսուցչի և մտաւոր աշխատանք ներկացնող դասակարգի դրութեան նկարագրութիւնն է.

Զորբորդ և հինգերորդ գլուխները նկարագրում են Թիֆլիսի կիսաերազացած հարուստ Տօկոսովի կեանքի մի քանի գծերը. Տօկոսովը, աչքի, առաջ ունենալով մօտալուս ընորութիւնները, սարքում է ճաշ,